Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Ք. Երևան, 16 մարտի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցում են՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

1. «««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին

Ա.Պողոսյան՝ ներկայացրել է նախագծի վերաբերյալ հետևյալ դիրքորոշումը և հայտնել, որ կողմ կքվեարկի՝ Նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների

նախարարության առաջարկության ընդունման և համապատասխան փոփոխությունների կատարման դեպքում:

Նախագծով նախատեսվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը հավասարաչափ ավելացնելու միջոցով ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ ՊՈԱԿ) նախորդ տարիների հարկային պարտավորությունների մարմանն աջակցելու նպատակով հատկացնել 64,915.2 հազ. դրամ:

Հարկ է նշել, որ Նախագծի հիմնավորման համաձայն՝ Նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պատվերով 2017 թվականի 4-րդ եռամսյակում սահմանված քանակով, ինչպես նաև 2017-2019 թվականներին սահմանված քանակից 419732 հատով ավելի իրականացված լաբորատոր փորձաքննությունների մասով առաջացած ԱԱՀ-ի, շահութահարկի և շահութահարկի եռամսյակային կանխավճարների գծով հարկային պարտավորությունների (ներառյալ տույժերը և տուգանքները) փոխհատուցման անհրաժեշտությամբ: Ընդ որում Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ վերոնշյալ հարկային պարտավորություններն առաջացել են «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» և «Գյուղատնտեսական մշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառումների շրջանակներում:

Այդ կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2021թ. N 01/8-1/1274-2021 գրությամբ առաջարկել էինք հիմնավորել Նախագծով նախատեսվող աջակցությունը վերը նշված միջոցառումների շրջանակներում իրականացնելու փոխարեն՝ նոր միջոցառմամբ նախատեսելու հանգամանքը: Նախագծի հիմնավորման համաձայն՝ աջակցությունը վերը նշված միջոցառումների շրջանակներում իրականացնելու փոխարեն՝ նոր միջոցառմամբ նախատեսելու հանգամանքը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ ժամանակահատվածում վերը նշված ծրագրի(երի) ֆինանսավորումը իրականացվում էր ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության միջոցով, ինչպես նաև դրամաշնորհի հատկացման պայմանագիրը կնքվում էր ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և ՊՈԱԿ-ի միջև:

Այդ կապակցությամբ, հաշվի առնելով, որ վերը նշված միջոցառումները ներկայումս շարունակում են իրականացվել ՊՈԱԿ-ի կողմից, ուստի

առաջարկում ենք Նախագծով նախատեսվող աջակցությունը իրականացնել վերը նշված՝ գործող միջոցառումների շրջանակներում:

Վերոգրյալ առաջարկության վերաբերյալ ներկայացվեց հետևյալ դիրքորոշումը, որ ի սկզբանե մշակված և շահագրգիռ պետական մարմինների կարծիքին ներկայացված նախագծով նախատեսվում էր համապատասխան գումարը հատկացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: Մինչդեռ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն կողմից ներկայացվեց դիրքորոշում, որի համաձայն՝ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ենթակայության տակ և առաջարկում է ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում առաջացած պարտավորությունների մարման նպատակով գումար հատկացնելու վերաբերյալ որոշման նախագիծը շրջանառել ըստ ենթակայության, չկապելով այն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող նշված երկու ծրագրերի հետ: Արդյունքում հաշվի առնելով նշյալ դիրքորոշումը, աշխատանքային քննարկումները, ինչպես նաև խնդրի կանոնակարգման հրատապությունը՝ նախագիծը լրամշակվեց:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 1 դեմ և 9 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

2. ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին

Ա.Պողոսյան՝ ներկայացրել է նախագծի վերաբերյալ հետևյալ դիրքորոշումը և հայտնել, որ կողմ կքվեարկի՝ Նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների

նախարարության առաջարկության ընդունման և համապատասխան փոփոխությունների կատարման դեպքում:

Նախագծով նախատեսվում է ՀՀ վարչապետի աշխատակազմին հատկացնել 188,590.4 հազ. դրամ ներմուծվող սննդամթերքի և կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննությունների գծով 2021 թվականի վճարները կատարելու, ինչպես նաև նախորդ տարիներից մնացած պարտավորությունները կատարելու նպատակով: Ընդ որում տրամադրվելիք գումարից 22,952.4 հազ. դրամը նախատեսվում է հատկացնել տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին՝ ավելացնելով պետական բյուջեի դեֆիցիտը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ներկայումս գործող իրավակարգավորումներով արտաբյուջետային բոլոր միջոցները ներառվում են պետական բյուջեում, ուստի Նախագծով նախատեսված ծրագիրը պետք դիտարկել որպես բյուջետային ծրագիր, հետևաբար հավաքագրված եկամուտները չեն կարող համակցվել ծախսերի հետ և նախորդ տարում ստացված եկամուտները չեն կարող դիտարկվել որպես ընթացիկ տարվա ծախսերը կատարելու ֆինանսավորման աղբյուր: Տվյալ պարագայում դեֆիցիտի ներառումը Նախագծում ընդունելի չէ, ուստի առաջարկում ենք վերջինս հանել Նախագծից՝ զուգահեռ նվազեցնելով ծախսերի չափը (եկամուտների չափին համապատասխան):

Առաջարկությունն ընդունվել է, նախագիծը խմբագրվել է՝ բացառելով դեֆիցիտի ներառումը նախագծում և 2020 թվականի հավաքագրված եկամուտի չափով գումարը առաջարկվում է հատկացնել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Ա.Ասոյան՝ կողմ եմ քվերակում՝ վերապահմամբ, եթե ՀՀ արդարադատության և ՀՀ ֆինանսների նախարարությունների մեր գործընկերները սկզբունքային առարկություններ չունեն:

Բ.Պիպոյան՝ կողմ եմ քվեարկում՝ վերապահումով, որ հաշվի կառնվեն ՀՀ ֆինանսների նախարարության դիտարկումները:

Մ.Սանդոյան՝ Օրակարգային 2 հարցին քվեարկում եմ կողմ, օրակարգի հարց 2-ի ձևակերպումը ճշգրտելու պայմանով (հարց 1-ի հետ նույնական է), ինչը, ենթադրաբար տեխնիկական սխալի հետևանք է:

Հայտնում ենք,որ փոփոխությունները և լրացումները կատարվում են միևնույն իրավական ակտերում, սակայն տարբեր իրավական ակտերի նախագծերով, որն էլ առաջացնում է շփոթություն:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 10 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ ««Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

Միաժամանակ, Խորհրդի նախագահն առաջարկեց նախապատրաստվել խորհրդի հաջորդ նիստին, որը նախատեսվում է անցկացնել 2021 թվականի ապրիլի 1-ին: Հայտնեց, որ խորհրդի նախորդ նիստում քննարկվել են հարցեր, որոնք պետք է մտնեն առաջիկա նիստի օրակարգ: Ի լրումն դրանց, ինչպես նաև նոր հնարավոր հարցերի, առաջարկեց ընդգրկել նաև Այրում երկաթուղային կայարանում ՍԱՏՄ մասնաճյուղ բացելու հարցը: Խնդիրը բարձրացվել է Հարավ-կովկասյան երկաթուղիների տնօրինության կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ